

ՃԱՂԵՐ

ՀԱՆՔԻՆԱ ՏԱՍՆՕՐԻՔԱՅ

Գ. ՏԱՐԻ Ե. ՇՐՋԱՆ

1863

ԹԻՒ 67. ԴԵԿՏԵՄԲԵՐ 10

“ ՄԱՍՏՈՒԸ ԸՆԿԵՐՄԵՆԻ ԱՇԽԱՐՀԻՆ ԼՈՅՍԻ Ե, ԵՒ ՈՒՐ ՈՐ ԼՈՅՍ ԿԱՅ, ՀՈՆ ԿԱՅ ՆԱԵՒ ՆԱԵՒԵՆԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՅԸ: Վ. ՀԻՒԿՕ

ԲՈՎԱՆԳՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ԱՋԻԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԱԿԱՆՑ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՂԱԲԱՎԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ. — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԳ ՍՄՐՈՅ. — ՀՈՎԻՒ ԵՒ ՀՈՎՈՒՈՒՇԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ԱՂՋԱԿԱՆՑ ԵՐԵՍՓՈՒՆՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀԱՅ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լուսավորութեան արեւը, կրսէ երեւելի հեղինակ մը, ընկերային երկրագունտին զէնիթը հասած՝ իւր ճառագայթները ամէն կողմ կարճակէ՛ թմրած մարմիններու առոյց կազմ և առնութիւն տալով, մեռածներն ալ ջերմուցանելով ու զարթուցանելով:

Չենք կարծեր թէ անընդունելի կարծիք մը յայտնած ըլլանք, եթէ համարձակինք ըսելու թէ այս կենսաբաշխ ճառագայթներուն մէկ քանին ալ մեր ազգային կենաց հորիզոնին վրայ տեղ տեղ սկսած է փայլիլ: Սակայն փութանք բացատրելու մեր միտքը որպէս զի շլամիա Հայը շուտ մը չուրի, չիբայ, կարծելով թէ մեր ամբողջ ազգին թմրած մարմինը կենդանութիւն՝ և կազմութիւնն ալ նոր և անմաշելի զսպանակ մ'ընդունած է, ըսել կուզենք: Այդպիսի Սպանիական գղեակներ

չինելու զաղափարը հեռի է մեզմէ: Ինչ որ հիմա անհնարին կերեայ ոմանց, զուցէ ապագային մէջ հնարին ըլլայ. այլ հիմա պէտք է զիտանք թէ ինչ ենք և մեր ենք:

Բռնեք ուրեմն ինչ որ պիտի ըսենք:

Օր մը քանի մը Հայ միտքեր՝ գտնուելով ազգային կենաց հորիզոնին այն կողմը, ուր լուսավորութեան ճառագայթները կը բեկբեկին, լուսաւէտ ջերմութիւն մը զգացին, մերկացան անտարբերութեան կեղևը, հետաքրքիր նայուածք մը նետեցին զերենք շրջապատող մարդերու և իրերու վրայ, և ուշաբրեցան՝ տեսնելով թէ դարաւոր հըրէշ մը կար այն հորիզոնին վրայ:

Անպամ մը խորհրդակցեցան իրենց խղճին հետ, անոր հետ վիճեցան, կուռեցան, և հասուն դատումէ մ'ետք սա նշանակելի վճիռը տուին:

“ Ազգին ազատումը այս հրէշին բարձումէն կախում ունի. մեռցնենք զայն: ”

— Ո՞վ էր արդեօք այն հրէշը, որ դարերէ 'ի վեր կանգուն և անողոքաբար կսպասէր հոն:

— Հինցած և ծերացած ողի մ'էր, չարութեան ողին էր անիկա, մարդկութեան այն սովորական թշնամին, որուն կազմութեան տարրն է տըղիտութիւնը՝ իւր ամէն ծնունդներովը և սերունդներովը:

Խնդիրը միայն հրէշի մը բարձման վրայ չէր այլ նաև անոր տեղ ազատարար պահասան հրէշ տակի մը կանգման վրայ էր:

— Ո՞վ պիտի ըլլար այս պահասան հրէշ տակը:

— Գիտութիւնը՝ իւր ամէն ճիւղերովը և հետևութիւններովը:

Արդ երբ այս հրէշին բարձումը վճռուեցաւ, շատ չանցաւ վճիռը ընդունուեցաւ նաև հասարակաց կարծեաց դատարանէն: Ան ատեն իրօք պիտի մեռնէր հրէշը, և անոր դիակը թաղելու և տեղը փրկութեան ողին պահպան դնել հարկ պիտի ըլլար:

1860 Մայիս 24ին հասարակաց կարծիքը պատրիարքարան ներկայացաւ վեհապետաբար, և օրինաւոր բարձում մ'ըրած ըլլալու համար, ըսաւ. Սոհրէշին մահապարտութեան կնիքը վաւերացուցէք, որպէս զի մեռցնենք զայն և իւր թաղման բերկրառիթ հանդէսը կատարենք յանուն ազգային փրկութեան:

Ստորագրեցաւ դատակնիքը, մեռաւ հրէշը, այլ, ախոս, որ դիակը չկրցանք թաղել: Ուրիշ խօսքով ըսենք. հասարակաց կարծիքը դատակնիքին դործադրութիւնը խումբ մը մարդերու յանձնեց, որոնք իրապէս մեռցուցին հրէշը, բայց չթաղեցին դիակը: Գործը անկատար մնաց:

Գիակը չթաղուելով՝ սկսաւ սպառնալ ազգային կենաց իւր վնասառիթ բուրումովը: Իրերուն այս վիճակը բաւական ժամանակ տեւեց, և իշխանութիւնը տեսնելով թէ հանրութեան կամքովը մեռնող այն հրէշին վերակենդանութիւնը անհրաժեշտ և բնութեան հակառակէ, հաճեցաւ անոր թաղման արտօնութիւն աւելու 1863 Մարտի 17ին:

Ազգը՝ որ շատ ժամանակ չէ՛ տէր եղաւ այս արտօնութեան, իւր ընտրած մարդերուն հրամայեց կատարել դիակին թաղման յուղարկաւորութիւնը, անբառնալի կախառիչով մը գոցել անոր դերեզմանը և վրան գրել Նախախնամութեան սա վճիռը:

» Յաղթանակ լուսաւորութեան և պարտութիւն խաւարի: »

- Ո՛վ էր հրէշը.
- Անցեալը.
- Ի՞նչ էր դատակնիքը.
- Սահմանադրութիւնը.

— Ո՛վ էր թաղման հանդէսը կատարելու, փրկութեան ողին պահպան դնելու պաշտօնին յանձնառու եղող մարդերու խումբը.

— Երեսփոխանական ազգային վարչութիւնը: Ինչպէս յայտնի է, Հայ ազգին ներկայացուցիչներու այս պերճաշուք և պատկառելի խումբը

փոքրիկ պատասխանատուութեան ներքև չցանուիր:

Շէնքիմը քանդումը զիւրին է և հնարին նաև ախմար միտքերու և տկար բազուկներու համար, այլ անոր տեղ նոր և լաւադունի մը կանդումը գծուարին է և ճարտարութեան կարօտ: Աւելորդ չէ ըսել ուրեմն թէ ազգին վստահութիւնը վայելող երեսփոխանութիւնը ապագային առջեւ անոր պատասխանատուութիւն մ'ընդունած է՝ ազգասիրութենէ և 'ի պարտուց ստիպեալ՝ յանձնառու ըլլալով իւր ձեռքը առնելու ազգային դործոց վարչութեան սանձը, պատասխանատուութիւն մը որ կը յարաբերի կանդնուելիք լաւադոյն շէնքին ամբողջութեանը և վայելչութեանը:

Շէնքն է ապագան, և ապագան ալ արգի մեր խարուսիկ ու երևակայական ազգային կացութեան յաջորդող յառաջադիմական իրական կացութիւն մը:

Ահա այս է Ազգային երեսփոխանութեան վրայ դանուած փափուկ և վեհ պաշտօնը, որուն ինչ ըլլալը նոյն իսկ անիկա հրապարակաւ ազգին յայտնեց իւր առ ամենադատիւ Պատրիարք Հայրն ուղղեալ ստենարանութեան մէջ:

Ահա Մեծպատիւ Գրիգոր էֆէնտի Օտեանին կարգացած ճառին քանի մը պարբերութիւնը:

« Կառավարութեան գլուխ եղողներուն կը վերջը բերի չափազանցութիւնները ամօքել, կիրքերը հանդարտեցնել և ՃՇԱՄԼՏՈՒԹԻՒՆԸ ԾԱՌԱՅՈՒՆԸ: »

« Ձեր Սրբազնութեան հարկ չէ ըսել որ « սասնկ իններորդ դարու մէջ՝ ազգ մը որ ըստ « նախընտրանակութեան ունի և չարգանք, ՀԻՆՇ « ՄԻ և իր վախճանը ԿՈՐՈՒՍՏ ԵՆՆՈՒՄ « ՍԸՓԵՂԻ: »

Պարզ և մեկին են այս խօսքերը. ասոնք աներև կը ցուցնեն Ազգային վարչութեան պաշտօնը, որ է.

- Ծառայել ճշմարտութեան,
- Աշխատիլ ազգային զարգացման,
- Իւր այս պաշտօնին ճշգիւ կատարման հսկելու իրաւունք կուտան որու որ երեսփոխանական ժողովը ընտրած է իւր ազատ կամօքը, այսինքն Հայ հասարակութեան:

Թիւրքիաբնակ Հայերուն, զրեթէ երկուքը կէս միլիոնէ բաղկացեալ ժողովուրդի մը նայուածքը հիմա կը նայի դէպ 'ի այն սրահը ուր կը բաղկան ազգային կառավարութեան գլուխ եղողները:

Հոն, այն սրահին մէջ, ազգին ապագային ճարտարապետները ու միանդամայն ներկային վերջերը բուժող բժիշկները կը բաղկան: Հոն, այն

արահին մէջ կայ ձուլարան մը ուր դաղափարներ կը ձուլին, դաղափարներ որք աասնեւիններորդ գարու մէջ դարդանալու ընդունակութիւն ունեցող ազդե-
րուն փրկութեան զինակիրներն են, դաղափարներ, որոնց անեակէն կախում ունի ազդերու կորուստը կամ դարդացումը, դաղափարներ, որոնք արքայա-
կան միտքերու մէջ կսպողին այսօրուան օրս և կընեն ինչ որ կընէր յառաջագոյն սուրը և վառօգը. դա-
ղափարներ, որք մարդկային ընկերութեանց տեսա-
նելի ճակատադիրներն են, դաղափարներ, որք Այա-
խախնամութեան պատգամաւորներն են տիեզերաց
մէջ և անոր անօրինութիւնները կը հաղորդեն աշ-
խարհիս՝ գարերու մէջէն, ընդհանուր մարդկութեան
մէջէն, իրենց նպատակ ունենալով միշտ Գեղեցիկին
և Ճշմարտին գահակալութիւնը և հաստատութիւնը:

Արդ ազգային այս խորհրդարանէն, այս ձու-
լարանէն արագորուող դաղափարները ամէնուն ու-
շագրութիւնը հարկ է որ դրուեն:

Ամէն Հոյ ստիպուած է ընդունելու ինչ որ
կը մտածէ, կորոշէ, կը հրամայէ և կը դործագրէ
այս խորհրդարանը: Մեզի համար վե՛հ տեսարան,
որ առաջին անգամ կը ներկայի յուսարեկ ժողո-
վարդի մը տեսութեան, և ուր իւրաքանչիւր ոք կը
փափաքի նշմարել յոյս մը, լոյս մը:

Այս փափաքը ոչ միայն բնական, այլ նաև
օրինաւոր է: Արեւիտիտանութիւնը կը նշանակէ
հանրութեան կամքը գործադրելու փոխանորդութիւն:

Որ և է մարդկային ընկերութիւն իւր ընկե-
րակցութեան դաշինքը ինքը իր կամքովը որոշելու
և հաստատելու իրաւունք ունի: Բայց « հանրու-
թեան մը կամքը անփոխադրելի է, » կըսէ Քուսօ:

Այժմ կամքս այսօր կարենայ փոխադրել, վաղը
անոր աւանդապահը կրնայ իմ թշուառութիւնս վաճ-
ուել և գործադրել, և ես պիտի պարտաւորիմ ըն-
դունիլ այս վճիռը:

Աս ոչ թէ իմ կամքս, այլ անոր գործադրու-
թիւնը փոխանորդի յանձնեցի: Ինքնութիւնս կը
կամի որ ընկերակցութեանս գաղնիքները արդարա-
պէս հաստատուին, իրաւունքներս ու պարտաւորու-
թիւններս ճանչուին ու յարդուին:

Հանրութիւնը ճշմարտութեան ծառայելու և զար-
գանալու պատուէրը իւր խղճէն ընդունած ըլլա-
լով՝ նոյն պատուէրին գործադրութիւնը իւր ընտ-
րած երեսփոխաններուն կը յանձնէ, և երեսփո-
խանութիւնը ընդունելով այսպիսի պաշտօն մը՝ ի
լուր ամէնուն կը խոստանայ ըստ այնմ վարուել:
Ուսկէ կը հետևի թէ հասարակային պաշտօնակալ
մը հանրութեան շահուն հսկողն է և ծառան: Առ-

ափայլ միտքերու համար խիստ դիւրամարս ճշմար-
տութիւն մ'է այս: Աշխարհիս անցեալը չէր տես-
ներ այս ճշմարտութիւնը, և եթէ տեսներ ալ,
չպիտի ընդունէր: Բայց ներկայն կընդունի, վա-
սըն զի իւր ծերացեալ ողին, որ էր մութը, մե-
ռաւ, ու սեղը յաջորդեց առոյգ և նորածին հոգի
մը՝ որ է լոյսը:

Արդ եթէ պիտի կրնանք ըսել թէ ազգային
երեսփոխանութիւն մը ոչ այլ ինչ է բայց միայն
ազգին կամացը գործադիր պատկառելի ժողով մը,
խումբ մը կամ ընկերութիւն մը, իբր բնական
հետեւութիւն այս ճշմարտութեան՝ թող ներուի մեզ
ըսել նաև թէ ազգը արտօնութիւն և իրաւունք
ունի՝ օրինաւոր սահմանի մը մէջ՝ հսկել իւր կա-
մաց գործադրութեան կերպը ու եղանակը:

Ի հարկէ ազգային երեսփոխան մը՝ հանրաբար
խօսելով՝ ունի իւր իրաւունքները ու պարտաւորու-
թիւնները, առանց որոյ կարելի չէ այսպիսի պաշ-
տօնի մը արժանանալ: Ունի նաև այն յատկութիւն-
ները որոնցմով միայն հնարին է արժանաբար վա-
րել նոյն բարձր պաշտօնը և զորս կամփոփեմ եր-
կու խօսքի մէջ: Առաքինութիւն և լոյս:

Առանց ազգային սուրբինութեան՝ հանրու-
թեան գործակալ և անոր շահուն պաշտպան կալ
գժուարին է: Առանց լուսոյ անհնարին է տեսնել
ինչ որ պէտք է այսպիսի գործակալութիւն և պաշտ-
պանութիւն մ'ընելու համար:

Բայց ազգ մը դարձեալ չկրնար կուրօրէն վըս-
տահիլ մարդկային առաքինութեան և լուսոյ: Մարդ-
կութիւնը սխալական է: Անիկա կրնայ աղէկութիւն
ընել ուզել, բայց կիրքն ալ կրնայ արդիւնէլ զին-
քը իւր նպատակին հասնելու: Իբր տէր իւր ան-
ձին, իբր սանձահար իւր կրից՝ անիկա կրնայ ան-
կեղծօրէն աղէկութիւն ընել՝ ուզել, և սխալակա-
նութեամբը չզիտնալ ընելու կերպը. կրնայ ճըշ-
մարտութեան ծառայել կարծել և մտրորութեան
մէջ թաւալիլ. կրնայ ազգային դարդացման նպաս-
տել կարծել և իրապէս ու յանդէսս անոր կուր-
ծանման նկրտիլ:

Արդ երեսփոխանական վարչութեան մը գոր-
ծառնութիւնները հսկելու կարեւորութիւնը և իրա-
ւունքը յայտնապէս կերևան հոս:

Ո՞վ պիտի ըլլայ այս հսկողը. — Աոյն իսկ
հանրութեան ձայնը: Հաստատուած ձայնը չախալիք,
վասն զի Աստուծոյ ձայնն է: Մեր ազգն ալ հի-
մա ունի իւր գործակալները ու շահուն պաշտպան-
ները, որոնք են երեսփոխանական ժողովի պերճա-
շուք անդամները: Ունի նաև հասարակաց ձայն մը

և ասոր արժողուն է Հայ օրագրութիւնը . ասոր մէջ
կը գահակալէ այն և կը տիրէ իշխանարար :

Այս կենթագրէ Հայ օրագրութեան բանագա-
տելու իրաւունքը : Եթէ մեր բուն նպատակը այս-
պիսի իրաւունքի մ'էութիւնը հաստատել ըլլար ,
կրնայինք երկարօրէն խօսիլ և չբաւականանալ այս-
պիսի համառօտ գրութեամբ մը : Ո՛չ, մեր նպատա-
տակը այս իրաւունքը Ազգային վարչութեան ցու-
յունել չէ , ըստ որում անիկա մեզմէ աւելի զիտէ
և կը ճանչնայ զայն ինչպէս որ պաշտօնական հը-
րատարակութեան մը մէջ ալ արդէն տեսանք մեր
կարծիքներուն հաստատութիւնը :

Մեր նպատակն է խօսիլ մասնաւորապէս Հայ
թերթերու վրայ և տեսնել թէ անոնք շատ անդամ
ինչպէս կը մբռնեն իրենց այս իրաւունքը , ինչպէս
կը վայելեն զայն , և քանի մը պարագաներու մէջ
մինչև որ կերթայ այն :

Հանգիսիս յաջորդ թուոյն կը թողունք մեր
ընելիք գիտողութիւնը և խորհրդածութիւնը :



ԱՂԶԿԱՆՑ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Բնկերութեանց մեջ մտնելու ևս եղծելու սկը-
սոց նորապի կին մը հոն ուրիշ բան չը-
տեսներ՝ բայց միայն ինչ որ կը ծառայէ
իւր սնափառութեանց , ևս երջանկու-
թեան սկստմամբ իւր ունեցած շփոթ
գացափարց ու ջինքը շրջադասոց տմէն
տեսակ իրերու շառաչիւնց չեն թոցու-
ր որ տնոք հոգին ամբողջ բնութեան ձայ-
նը չսէ : **ՎՕԼԹԻՐ** .

Որչափ ծնոցքներ կը կարծեն թէ կրթութիւն
տուած են իրենց ազգիանց՝ երբ անոնց
գաստտուներուն ամակտեներ կը ջճա-
րեն : **ՏԻԿԻՆ ՊԷՐՆԻԷ** .

Կրթութեան սղատակն է բարգաւաճել այն
տմէն կատարելութիւնները որոնց ըն-
դունակ է տմէն մեկ տեղատ : **ԳԵՆԹ** .

Ֆենեղուն և Բուսօ աշխարհ զալով մարդկու-
թեան յառաջագիտութեանը նպաստեցին , և իդական
սեռին դաստիարակութիւնը շահեցաւ այս յառաջա-
գիտութեան մէջ : Ա՛լ ոչ ոք կը վիճաբանի՝ զիտ-
նալու համար թէ արգեօք կիներուն կրթութիւնը օգ-

տակար է , և թէ որչափ ըլլալու է անոնց կրթու-
թիւնը :

Իւրաքանչիւր ոք կը զիջանի բարգաւաճել ա-
նոնց իմացականութիւնը . նաև աւելի հեռի կեր-
թայ , արհեստագէտներու և գիտնականներու պէս
կը տաղանդաւորէ զանոնք , վերջապէս համօրէն
գիտութեանց ուսումներէն անդամ՝ սակաւ ինչ բան
կը սորվին . բայց այս ուսմանց մէջ ամենեւին չկայ
ինչ որ կարենայ ստիպել զանոնք մտածելու բուն
խիկ իրենց գիտաւորութեան վրայ : Միայն գարո-
ցական տետրակները կը տպուին անոնց յիշողու-
թեան մէջ :

Այսպէս երբ կը հասնին այն հասակը որ
երեւան կելնեն կիրքերը , այն կիրքերը զորս բա-
ւականապէս չեն կրնար սանձահարել թէ՛ առա-
քինի սովորութիւնները , թէ՛ հոգիի զօրութիւն-
ները և թէ՛ կրօնական սղղունքները , ան տեսն
կըսեմ , կրից այն երեւման ժամանակ աղջիկներուն
ամբողջ ունեցածը ոչ այլ ինչ է՝ բայց միայն եր-
կու ձեռք որք բիանօյի համար յաջողակ են , յի-
շողութիւն մը որ կը կրկնէ ինչ որ ըստուած է ի-
րեն , և հոգի մը որ կը նիրհէ :

Աւելցնել ասոնց վրայ քիչ մը ջերմեռանդու-
թիւն , կեղծ բարոյականութիւն մը , մեքենական
տաղանդներ , հեշտասիրութիւնը , կենաց իրերու
նկատմամբ անոնց անդիտութիւնը , սիրելու և սի-
րուելու պիտոյքը , և հա՛ս քանի մը բացառութիւն-
ներէ՝ իզատ կատարեալ գաղափար մը կուեննաս ձեր
դարու մէջ կազմուած կանանց վրայ :

Ըսել չեմ ուզեր թէ այս դաստիարակութիւնը
բոլորովին անօգուտ է . զիտեմ թէ այն ալ իւր
գեղեցիկ կողմը ունի . ընկերութիւնը անոր շնոր-
հէւ ճաշակ և արհեստային կերպեր կընդունի , ա-
ւելի շնորհք և աւելի նորութիւն կուեննայ : Ա-
մէն աստիճանի կանայք իրեց հանձարովը կը մըր-
ցին հոն . կրթութիւնը սակաւ առ սակաւ հաստա-
րութիւն կը հաստատէ ընկերութեան մէջ , որուն
միաձևութիւնը զօրաւորագոյն հասարակապետու-
թիւն մ'է , և չեմ կարծեր թէ անընդունելի կար-
ծիք մը արայայտած կըլլամ եթէ հաստատեմ թէ
կանանց տաղանդները աւելի նպաստեցին աստիճան-
ներու հաստարութեան քան թէ ազգային ժողով-
ներու վճիռները :

Մտիր մեր ամենէն նորասէր ընկերութեանց
մէջ , տես սասրահին մէջ ճաքի վրայ կայնող մարդերու
բազմութիւնը , որք կարծես թէ միևնոյն կերպա-
սէ զդեստներ հաղած են . այն՝ սեղանաւոր մ'է ,
այս՝ վաճառական մը , մէկը արհեստաւոր , միւսը

գրողէս մը . այլ սակայն թէև միաձև են անոնց սեւագոյն զգեստները , ամէնուն լիզուին և ձեւը ուն մէջ գրոջմ' մը կայ , որով կը զանազանին իրարմէ և տարբեր դասերու կը բաժնուին :

Բայց կիներուն նկատմամբ այս դիտողութիւնը չենք կրնար ընել . անոնց շնորհալի կերպարանքը , վայելուչ կերպերը տեսնելով՝ մարդ կը կարծէ թէ ամէնքն ալ մի և նոյն ազնուականութիւնը և մի և նոյն աստիճանը ունին . մի և նոյն կրթութիւնը , մի և նոյն շնորհքը , արհեստներու մի և նոյն ճաշակը կը նշմարուի ամէնուն վրայ : Կարելի չէ վաճառականի , սեղանաւորի , զօրապետի և նօտարի մ'աղջիկները իրարմէ զանազանել : 'Այլէ սա զմայլելի կիներուն խումբը , որն որ Իգալեան դերասաններու պէս Բօսինի մէկ գեղեցիկ կտորը կերպէ ներգաշնակութեամբ : Անոնց որը բժշկի մը կիներն է , որը Ֆրանսայի ատենակալի մը կիներն է , այս՝ մարդիզուհի , այն՝ նորահաս արուեստուհի մ'է , միւսն ալ Հասարակ մարդու մը գուտարը : Ասոնք ամէնքն ալ միայն իրենց տաղանդովը կը զանազանին իրարմէ :

Հիմա դարձուր նայուածքդ սա կնոջ վրայ , որուն զարգարանքը և հագուստը թէև այնչափ պարզ է , բայց վայելչութեամբը վայրկեան մը ամէնուն ուշադրութիւնը իւր վրայ հրաւիրեց . մեր ամենէն աղոթ դքսուհիներուն մին է անիկա : Տես թէ ինչ պիտի սիրուն ժպիտ մը փոխանակեց միւս նորատի կնոջ հետ որ եկաւ քովը նստաւ : Արկուքնին ալ իրօք նշանաւոր կիներ են . դքսուհին Ասիներէն կուսուցանէ իւր որդուցը ու վիպասանութիւններ կը հեղինակէ . միւսը տաղաչափութիւններ կը շինէ , բանաստեղծուհի մ'է , գեղանի է , գարուս Գօրինն է անիկա , և իւր ազնուականութեան աղբիւրը իւր փառքն է : Այսպէս այս սիրուն ու շքեղ ընկերութեան մէջ , ուր ազնուականութիւն , հարստութիւն , տիտղոսներ , վիճակներ , վերջապէս ամէն բան իրարու խառնուած են , ամենեւին արատ մը չկայ : Գեղութիւնը նայուածքը կը գրաւէ , տաղանդը աստիճանները կը նշանակէ և կրթութիւնը հարթութիւն չպահելով կը բարձրացնէ :

Մտուգիւ եթէ կիները պարտաւորէին իրենց կեանքը գործարաններու և հանդէսներու մէջ անցունել , եթէ անոնց պաշտօնը մի միայն շացնելու ու հաճելի ըլլալու վրայ կայանար , խնդիրը դիշուրային հանդէսներու և ընկերութեանց մէջ փայլող այս կրթութեամբ լուծուած և որոշուած կըլլար : Բայց զուարճութեան ժամերը կարճատե են և անոնց ետեւէն կուգան մասժութեան յամրաբայլ ժամերը : Բնտանի կեանքը , բարոյական կեանքը ,

մայրական պարտաւորութիւնները , հարսութեան պարտաւորութիւնը (devoir d'épouse) հեռահեռ կուգան կը հասնին , և ահա այս ամէնը մոռցուած է : Անտե՛ն կիներ ընտանեաց ծոցը դարձեալ գատարկութեան մէջ կը գտնէ ինքզինքը՝ վիպային (romanesque) կիբերով , անսանձ բորբոքումով համակուած , յարակից ունենալով իրեն ձանձրոյթը , որն որ կանանց առաքինութեան ամէնէն մեծ դահիճն է : Իրերու այս վիճակին հետևութիւններն են հառաչանքներ որք մեր ականջին կը ձայնեն . այս հառաչանքները ամէն մայրերու աղաղակն է , ամէն կանաճի մարդերու զանդատներն են , և այս ցաւալի ճնշումներուն մէջ՝ ուր իւրաքանչիւր ոք կը յուզի , կը յուսահատի , յոռագոյն իրողութիւն մը կայ որ է անհոգութիւնը և որով գէշութիւնը իւր վերջին աստիճանը կը հասնի : Աղջկանց տրուած կրթութեան մասին մեր սրբափ կարճատես ըլլալը դիտարու համար ինչ պէտք է . — Հարցունելու է թէ այս կըրթութեան նպատակը ինչ է : Մի՞թէ կրօնքն է , բայց կրօնքը , այն զոր լաւ մը չենք դիտեր , կը դատապարտէ գրեթէ ամէն ինչ որ կուսուցանենք : Մի՞թէ ընտանեկան երջանկութիւնն է . բայց այն տաղանդները որք այնչափ դժուարութիւններով ստացած են , այն տաղանդները որք միտքը կամեն՝ (steriliser) անային կենաց մէջ կանհետին :

Մի՞թէ հայրենեաց փառքը ու երջանկութիւնն է . ցնորք . սր մայրը կը մտածէ այդ բանին վրայ այսօր : Այսպէս ուրեմն քանի որ կրթութեան նպատակը կորոնենք՝ ամէն բան կանեւելութեանայ . մասնաւորի երջանկութեան , հանրութեան բարօրութեան համար բան մը չկայ : Կը մնայ ընկերութիւնը . և ստուգիւ մեր ամէն նախատեսութիւնները հոն կը ձգտին : Իւրաքանչիւր ոք կը մտածէ աւելի հաճելի ըլլալ ընկերութեան քան թէ գիմպարաւել անոր . կուզէ փայլիլ , կուզէ տիրել հոն . ուրեմն սնտիպուութիւնն է կրթութեան նպատակը , զորն որ ամէնէն խանգակաթ մայրերը անընդհատ կը ցուցնեն իրենց աղջկանց , ժայռ մը առ որ կը մղէ զանոնք ընկերութիւնը և ուր ասիկա՝ անտարբերութեամբ կը նշմարէ անոնց խորտակումը :

Մնափառութիւն հաղուստի մէջ .
Մնափառութի հաճոյական տաղանդներու մէջ .
Մնափառութիւն կրթութեան մէջ :
Մայր մը իւր աղջիկին կըսէ . « Գեղեցիկացիք , քաղաքավար եղի՛ր , քեզի կը նային , քաղցրաբարոյ եղի՛ր , հեղ և հնազանդ եղի՛ր , քեզ մտիկ կընեն . » Այս խօսքերը կը նշանակեն . « Ամէն տեղ իրականին տեղ երեւոյթը դի՛ր . » Ինչպէս մտքմիւր,

նայնպէս հոգին ալ իւր թեթև դարդարանքը ունի որուն կը սովորինք որորանէն սկսելով. հիւանդու թիւնը չեն բուժեր՝ այլ կը պահեն. բարքը չեն փոխեր՝ այլ կը ծպտեն: Այսպէս ամեն բան սնափառութեամբ կը սքօղի. ուրեմն կըթու թիւն կառնուի ոչ թէ կըթուեցու՝ այլ կըթուած երևալու համար:

Կը խոստովանիմ թէ նորաբոյս օրիորդի մը պարագոյ ժամերը կրնան զմայլելի ըլլալ երածը տու թեամբ, նկարչութեամբ և պարով, ասոր ըսելիք չունինք. բայց քանի որ զմայլելի զուարճութիւն մ'է այս, ինչո՞ւ ծանրատաղտուկ և դժուարին գործ կ'ընենք զայն: Ինչո՞ւ յօգնեցնենք զանիկա այնպիսի աշխատութիւնով մը որն որ մի միայն զբօսանք մը պիտի ըլլայ: Գեղեցիկ հարցում. դուն կուզես որ զինքը զբօսցնող տաղանդներ ունենայ անիկա. ես ալ կուզեմ որ այնպիսի տաղանդներ ստանայ, որք ծափահարութեանց ենթարկեն զանիկա, այսինքն կուզեմ որ բիւնոի համար յաջողակ ձեռք և պարելու համար քաջավարժ ուր մ'ունենայ. դարձեալ ուրեմն սնափառութիւնն է ուղուածը:

Վերջը յաջորդ ընում.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՓԵՎԱՆՈՒԹԻՒՆ 1

Քրանսայի մէջ քաղաքային ազատութիւնը՝ իւր ամէն կերպերովը սեփականութե՛ն ազատումը (affranchissement) և աշխատութեան ազատութիւնը կատարեալ զուգընթացութիւն մ'ունեցած են:

Ամէն անիրաւ տուրքերը՝ որոնց ենթարկուած է երկիրը, ասոր արտաբերութեանց շրջաբերութեանը վրայ գրուած ամէն ներքին խոչընդոտները, ազատ հնարագիտութեան խափանարար ճնշումները, ինչպէս էին արուեստաւորաց զլսաւորութիւնը և վերակացութիւնը, վերջապէս մարդուս միտքը ճընշող նեղութեանց միջոցոյն մասը մի և նոյն օրուան մը մէջ ջնջուեցան, և այն օրը արդի ժամանակաց ամէնէն նշանաւոր թուականն է:

Անշարժ սեփականութիւնը (propriété foncière) մասնաւոր և սաստիկ յարձակումներու ենթակայ եղած է. հարկ է ուրեմն մասնաւորապէս դիտել և

1 Տես թիւ 62

քննել զայն: Կրտսն թէ մարդիկ երկիրը յափըռաակելով մարդկային սեռը հնձելու, ճարտակու և թռչուն ու ձուկ որսալու սկզբնական իրաւունքին զրկեցին: Այսին հարցունենք թէ յափըռակութիւն ըսելով ինչ կ'իմացուի: Այն բանը միայն կը յափըռակուի որ ուրիշին կը վերաբերի, այն բանը միայն կը յափըռակուի որ արժէք մ'ունի. արդ անգործ երկիրը, — և այս ստուգադոյն ճշմարտութիւն մ'է, թէ և հասարակօրէն շատերուն անձանօթ, — անգործ երկիրը, կըսեմ, ինքնին արժէք մը չունի: Անշուշտ ինչպէս աշխատութեան ամէն գործիները, նոյնպէս երկիրն ալ օգտակար է, բայց աշխատութեամբ և իրեն համար վատնուած զանձով միայն արժէք կ'ունայն:

Անգործ երկիր մը ասօջին գրաւողը ըլլալը այնպիսի փանաքի առաւելութիւն մ'է որ աշխատութեան այս գործին կարծեցեալ յափըռակիչները շատ անգամ նորածին սեփականութեան զոհ եղած են քան թէ մասնաւորապէս անոր առաւելութիւնները վայելող: Այս շատ անգամ կը պատահի որ բոնց որ կը գրանեն կամ կը նշարեն, վերջապէս անոնց որք ամէն տեսակ շահաբեր գործառնութեանց առջին դիտողները և գտնողներն են: Անգործ երկիրը ուրիշ բան չէ թէ ոչ մտրեհիով և զեռուծով լի արամութիւն մը, ժանտաբեր ճահիճներով զոյցուած է այն. մարդս կը կուռի անոր հետ և ամէն կերպ վիշտերու կենթակայանայ. շատ անգամ ալ անտանելի զրկումներ և հիւանդութիւններ կըրելով իւր կեանքը կը կորուսէ: Յանիրաւի կը կարծուի թէ երկիրն է սկզբնական սեփականիչներ ընողը. ճշմարտութիւնը սա է թէ սեփականիչք երկիրը կազմէին ետքը անոր տէր եղած են. շնորհանք ըսելու թէ 'ի հարկէ նիւթապէս կազմել ըսել չենք ուզեր, վասն զի այս թէութեամբ մարդս բան մը չլսեցէ՛ք, արժողութիւն կրնայ կազմել, անիկա միայն այս կերպով կարողութիւն ունի արտաբերելու: Լօքին ժամանակը և ասոր տեղեկագրութեանցը նայելով Արանիացիք այս կէտիս նոյն կարծիքը ունէին: Անոնք Բաւսօին պէս չէին անխժեք որոնք որ կը համարձակէին չգրաւուած երկիր մը ցանկէլ (enclôre), արդաւանդել, սերմանել և ըսել. «Այս լին է», այլ վարձք մը կը շնորհէին անոնց, և աւելի օրինաւոր ընթացք մ'էր այս: Ոմանք ալ կըսեն թէ բոլոր երկիրները քանի որ գրաւուած են, յայտնի է թէ յափըռակութիւնը այս գրաւման մէջ կը կայանայ: Բայց անգործ երկիրը որ պակաս է երբէք: Երկրագունդիս մեծագոյն մասը անգործ երկիրներ է տակուին, վասն զի մարդս,


որուն համար կը այնպէս թէ ծերացեալ է, ընդհանրապէս կերեայ թէ նոր սկսած է իւր երիտասարդութեան դործը, և թէ մինչև հիմա թերի և անկատար կերպով իւր բնականութեանը տէր եղած է: Աոր յափշտակիչներու համար անհուն սարածութեամբ անդործ երկիրներ կան միշտ: Ամէն մարդ զիտէ թէ՛ օրինակի ազգաւ՝ Միացեալ Աստուծոց մէջ անչափապէս շատ անդործ երկիրներ կան: Արդ ասոնք ինչ արժէք ունին հոն. — Մեկուկէս արտավարը թալեր մը կարծէ, կամ լաւ ևս է ըսել, արժողը անդործ երկիրը չէ, այլ ընկերային պաշտպանութիւնը և այն նպատակաւորայն պարագաները որք ինքնին յառաջ եկած են մարդկային աշխատութենէ և որոնց մէջ գտնուած է անդործ երկրին շահաբերութիւնը, վասն զի անպատին մէջ՝ նաև անհամեմատելի բեղմնաւորութիւն մ'ալ ունենայ, արժէք մը չէր ունենար այն: Այնչափ ազգատ մարդիկ որոնց համար կողոպտուած են կըսուի, ինչու ուրեմն իրենք ալ չեն ուզեր երթալ յափշտակիչներ ըլլալու: Միթէ այս կերպով հարստանալը միայն ապագան մէջ հնարին ըլլալուն համար է որ չեն ուզեր երթալ և գրաւել այն տեսակ երկիրները. անշուշտ պատճառը այս չէ, հայտ լած են անոնք այն վիշտերը որք սակայն ոչ այնչափ դաւաճ են, որչափ էին առաջին գրաւողաց վիշտերը՝ այն ժամանակները ուր քաղաքակրթութիւնը չէր կրնար օգնել անոնց: Ա երջապէս դուցէ ըսուի թէ ինչ որ 'ի սկզբան ստոյգ է, ետքէն չկրնար դարձեալ ստոյգ ըլլալ, և թէ երկրի մը շահաբերութեանը յարակից դժուարութիւնները եթէ կարգարացնեն յափշտակութիւնը, հիմա ալ չեն կրնար զայն արդարացնել քանի որ քաղաքակրթեալ է աշխարհս: Այս առարկութիւնն ալ կը հերքենք՝ պատասխանելով թէ տակաւին կը տեւ այն կոիւր զոր բացած է մարդս հողին դէմ: Երկիրը աշխատութեան համար կազմելի գործի մ'է՛ ոչ միայն հին ժամանակները, այլ նաև հիմա և միշտ: Անընդհատ կրկնութեամբ սկսող գործ մ'է այս և մըշտնանաւորապէս մարդուս չթողուր որ շունչ առնու: Երկիրը ոչ թէ միայն աշխատութեան առաւելեալ գործի մը չկրնար ըլլալ, այլ նաև անոր պէս անընդէլ և անոր չափ սուղի նստող ուրիշ գործի չկայ: Տես մարդուս միւս յաղթութիւնները, ձին, կովը, էջը, ուղարը և ասոնց նման չթուղ կենդանիները: Աւելի դիւրութեամբ կը նուաճուին ու կը պահուին անոնք: Մարդուս և ընտանի կենդանեաց մէջ ստուգիւ գաղտնի խնամութիւն մը կայ: Ընդհանրապէս երկրիս և մարդուս մէջ կե-

րեայ թէ յամառութեամբ դիմադրող թշնամութիւն մը կայ որ կարծես թէ կը կրկնէ միշտ թէ առաջին և թէ վերջին գրաւողին Աստուծոյ այն վճիռը որ է. “ Կերիցես զՏայ քո քրտամբ երեսացդ ”:

Հատերը կարծելով թէ օրէնքը սեփականութիւնը կը հաստատէ փոխանակ պարզապէս պաշտպանելու՝ և թէ հետեւաբար կրնայ կերպաւորել զայն՝ փոփոխելի, իրական կամ կարծեցեալ և օրէնսդիրէն մեկնուած օգտակարութեան համեմատ, ակամայ ըստիպուեցան իբր նոյն իսկ սեփականութեան զեղծումները համարել այն ամէն անկարողութիւնները որք ըստ օրինի անզի ունեցած են սեփականութեան հակառակ, և այսպէս զայն զըպարտեցին ժողովրդոց քով: Այն ամէն առանձնաշնորհութիւնները որք աշխատելու ազատութեան և սեփականութեան դէմ ոճիրներ են, — և ասոնց մին է գերութիւնը, — իբր նուիրական սեփականութիւններ ինքնին առնուած ու արուած են:

Աստային իրաւունքները, որք մարդուս սեփականութիւնը անոր աշխատութեան արգեանցը և նոյն իսկ աշխատութեանը մէջ կըսահմանադրէին, իբր օրինաւոր և անվաճառելի սեփականութիւններ առնուած ու արուած են: Այս պատճառաւ այնպէս համարեցին թէ սեփականութիւնն է պատճառ այն զեղծումներուն որոնց զոհն էր այն. թէ սեփականութիւնը տեղի տուաւ այն չարեաց, որոնց մէջ ընդհանրապէս մարդկութիւնը զերծ կը մնար եթէ յարգուէր այն: Ստուգիւ չկայ անիրաւութիւն մը որուն աղբիւր եղած չըլլայ սեփականութեան բռնաբարումը, սեփականութեան, որուն իւրաքանչիւր օք տէր է իւր անձամբը, աշխատութեամբը կամ այս աշխատութեան արգիւնքովը:

Քանի մը հրատարակիչներու հետ եթէ մենք ալ սեփականութիւնը մի միայն օգտակարին վրայ հիմնելու ըլլանք, ամէն տեսակ զեղծումներու հաւանութիւն տուած կըլլանք: Կը կարծուի թէ օմանց համար օգտակար է անիրաւ առանձնաշնորհութիւններ հաստատել՝ ետքէն առանց կարծելու դուցէ թէ օգտակար է նաև այս առանձնաշնորհութեանց ջնջումը վճռելը:



ԵՐԳ ՍԻՐՈՅ

ՀՈՎԻՒՆ ԵՒ ՀՈՎՈՒՌՆԻՆ

ՀՈՎՈՒՌՆԻՆ

Քաղցրիկ Օւփիւռն ու Գարուն
Մեր դաշտերը երբ թողուն,
Տխուր Փլորան, ս'հ, կողքայ
Փախչին հաճոյք, վարդն շունչ տայ:

Այսպէս ևս իմ, սիրելի,
Սիրաբուս անդէն, 'ի պակսիլդ,
Ծիւրեալ ծնդեալ 'ի վշտի,
Ո՛հ, անհամբեր կը տանջի:

ՀՈՎԻՒՆ

Երբ ետ դառնայ քաղցր Գարուն,
Օւփիւռ զգուէ մեր դաշտեր,
Մըխիթարի բընութիւն,
Եւ գալարիք շունչ անունն:

Այսպէս կասկածըս անհետի,
Երբ զքեզ տեսնեմ իմ առջի,
Իսկ քու բերնի քաղցր ժպիտն
Ինձ պարզեւ նոր հոգի:

ԵՐԿՈՒՔԸ ՄԻՆՍԻՆ

Այո՛, պիտի սիրեմ զքեզ յաւիտեան,
Կերզնում զայն սրտանց սոյն յայս ծառաստան,
Որ եղած է միշտ մեր սիրոյ կայան:

Պիտի պահեմ, այո՛, խոստումս անսասան:
Այո՛ պիտի սիրեմ. . . և

ՀՈՎՈՒՌՆԻՆ

Ծոյլ Չմեղը դատապարտէ երբ հանգստեան,
Բզմեղուն ժրաջան,
Սպասելով ողբայ ան,
Եղանակին այն սիրուն,

Հրաւիրողն պարապման:
Անկեղծ Հովուուհիդ ալ,
Հեռի աչերէդ
Կըսկսի ողբալ:

Իւր սիրակէզ սիրաբուն յիշէ զքեզ անդուլ,
Փնտռելով միշտ ըզքեզ թէ ո՛ւր ես, ա՛հ, ո՛ւր:

ՀՈՎԻՒՆ

Երբ վարդն կարմրագոյն
Բուրէ հոտ անոյշ, սըփուէ քաղցրութիւն,

Արթուն

Մեղուն

Սլանայ յանտառ մեր սիրուն:

Այսպէս իմ ալ սէրս

Ի տես քու մատղաշ, հրապուրիչ գեղոյդ,

Փութացնէ քայլերըս,
Քու բաղկացող մէջ թռչելու համար,
Այս կերպ ճեպեմ աճապար:

ԵՐԿՈՒՔԸ ՄԻՆՍԻՆ

Այո՛, պիտի սիրեմ ըզքեզ յաւիտեան
Կերզնում զայն սրտանց սոյն յայս ծառաստան,
Որ եղած է միշտ մեր սիրոյ կայան,
Պիտի պահեմ, այո՛, խոստումս անսասան:
Այո՛, պիտի սիրեմ. . . և

ԿԵՍՆԵՐ

Թ. Կ. Գ.

ԾԱՆՈԹՈՒԹՅԱՆ

ԼԻՖԻՆԵՐՐ, ՄՈՒԽԵՅՅԵՐԻ

Մեծարող Վարսպետ Աղա Յ. Փոնոսեանի
հեղինակութիւնն է այս, որ ներկայ ազգային գոր.
ծերու վրայ հետաքրքրական խորհրդածութիւններ
և բանագատութիւններ կը պարունակէ:

Այս տետրակին վրայ մեր կարծիքը հանդիսի
յաջորդ թիւով յայտնել կը խոստանանք:

Կը ծախուի Պօլիս հեղինակին դրատունը,
վարագճի խան. թիւ 1. և ամէն դրովաճառաց
քով: Իզմիր դրովաճառ Պ. Յ. Հասկէքիւնեանց եղ.
բաթը գործատունը, գինն է 10 դահեկան:

ՄՈՒՍՇՅՐ ՄԵՍԵԼՑ

ՉՆՆ ԸՆԿԵՆԱԴԵՐԱՆ

Այս է նոր հրատարակուած օղտակար հան.
դիսի մ'անունը, որ կերեայ ամէն ամսոյ 1ին,
10ին, և 20ին: Այս թերթին առաջին և երկրորդ
թիւերը տեսանք, որոնց պարունակութիւնը դո.
հայուցիչ է: Խմբագիրն է Պ. Արմենակ Հայկունի:

Տարեկան գինն է 70 դահեկան. վեցամսեայ
40. Ճամբու ծախքը առնողին վրայ: Ստորագրու.
թեան տեղեք են. Պօլիս. Օւէնճիրլի խան. վերի
յարիւր. թիւ 19. Իզմիր. Ծառէի դրատունը: Հա.
լէպ. Պ. Յ. Ս. Բիւրքճիանօֆ. Պարտիզակ և
Նիկոմիդիա. Թորոս Աղա Մինասեան:

ՀԱՐԱԳԻՐ-ՏՆՕՐԻՆ

ԳՐ. ԹԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՉՄԻՌՈՒՆՍ

ՏՊԱՐԱՐՈՒՄ ԵՒ ՏԵՏԵՍԵՆ